# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N «ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/18»

«26» 04 2024թ.

ք.Հրազդան

**Հրազդանի համայնքապետարանը**, ի դեմս համայնքի ղեկավար **Ս.Միքայելյանի**, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<ՆՅՈՒ ԱՐՏ ՆԱԽԱԳԻԾ>>ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Ա.Դանիելյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **<<Հրազդանի Վաhե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակույթային ուսումնական կենտրոնի հիմնանորոգման, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի վարչական շենքի արտաքին պատերի ընթացիկ նորոգում,բակային տարածքի սալիկապատման և բարեկարգման, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Քաղսի գյուղի 2-րդ թաղամասի թիվ 15 հասցեում գտնվող շինության ընթացիկ նորոգման և հարդարման,նոր սանհանգույցի կառուցման և Փոսալցման աշխատանքների>>-ի նախագանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման խորհրդատվական աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Պատվիրատուի պահանջով նախագծանախահաշվային փաստաթղթերում կարող են կատարվել փոփոխություններ:

2.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **5 420 000 (հինգ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7.6 Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.7 Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.10 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

______________________

7.11 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.12 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Պայմանագիրը կազմված է **14** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**Հրազդանի համայնքապետարան**
**ք.Հրազդան, Սահմանադրության**
**հրապարակ 1 վարչական**
**Հրազդանի ՏԳԲ**
**ՀՀ 900122001515**
**ՀՀ 900122001523**
**ՀՀ**
**ՀՀ 900122001440**

**ՀՎՀՀ 03027114**

**--------------------------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Նյու արտ նախագիծ» ՍՊԸ**

**Ք.Երևան, Ծարավ Աղբյուրի 55/17**

**«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ**

**ՀՀ 220483332593000**

**ՀՎՀՀ 01024014**

**--------------------------Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Հավելված N 1
«26» 04. 2024թ. կնքված
«ԿՄՀՔ-ԳՀԽԱՇՁԲ-24/18» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| աշխատանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | կատարման | |
| հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը |
| 1 | 71241200/17 | ք.Հրազդան Միկրոշրջան թաղամաս 13-րդ փողոց թիվ 24՝ նախադպրոցական հիմնարկ /Հրազդանի Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակույթային ուսումնական կենտրոն/-ի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման խորհրդատվական աշխատանքներ | Ներկայացված է ստորև | դրամ | 3 370 000 | 3 370 000 | 1 | ք. Հրազդան Միկրոշրջան թաղամաս 13-րդ փողոց թիվ 24 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համապատասխան պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր |
| 3 | 71241200/20 | ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի վարչական շենքի արտաքին պատերի ընթացիկ նորոգում,բակային տարածքի սալիկապատման և բարեկարգման նախագանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման խորհրդատվական աշխատանքներ | Ներկայացված է ստորև | դրամ | 870 000 | 870 000 | 1 | ք. Հրազդան Կենտրոն թաղամաս Սահմանադրության հրապարակ 1 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համապատասխան պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր |
| 4 | 71241200/21 | ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Քաղսի գյուղի 2-րդ թաղամասի թիվ 15 հասցեում գտնվող շինության ընթացիկ նորոգման և հարդարման,նոր սանհանգույցի կառուցման նախագանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման խորհրդատվական աշխատանքներ | Ներկայացված է ստորև | դրամ | 590 000 | 590 000 | 1 | Հրազդան համայնք, գյուղ Քաղսի 2-րդ թաղամաս, թիվ 15 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համապատասխան պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր |
| 7 | 71241200/23 | Փոսալցման աշխատանքների նախագանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքներ խորհրդատվական աշխատանքներ | Ներկայացված է ստորև | դրամ | 590 000 | 590 000 | 1 | Միկրոշրջան,Կենտրոն,Հարավային թաղամասեր և Լեռնանիստ,Քաղսի ,Սոլակ բնակավայրեր | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համապատասխան պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր |

Հավելված 1

| | | |
|---|---|---|
| 1 | Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը | ք.Հրազդան Միկրոշրջան թաղամաս 13-րդ փողոց թիվ 24՝ նախադպրոցական հիմնարկ / Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակույթային ուսումնական կենտրոն/<br>Համաձայն անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման թիվ 2635747 վկայականի՝<br>Հողամասի չափը կազմում է 1.0405 հա,<br>Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,<br>Գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:<br>Տարածքում առկա շինության նկատմամբ իրականացվել են տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ: «ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ » ՍՊԸ կողմից 27.02.2024 թվականին տրված եզրակացությունում նշվում է, որ շենքի շինարարությունը իրականացվել է 1970-ական թվականներին:<br>Համաձայն եզրակացության եզրահանգումների՝<br>մասնաշենքերի փաստացի տեխնիկական վիճակը ֆիզիկական մաշվածության հաշվառմամբ առաջնորդվելով ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների հիմնանորոգում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերի պահանջներով, մասնաշենքերի հետագա անվտանգ շահագործման համար հիմնանորոգման թույլատրելի մակարդակ ընդունվում է «Սեյսմազինվածության բարձրացում»,<br>մասնաշենքերի «Սեյսմազինվածության բարձրացում» եղանակների ընտրության հիմքում պետք է լինի արդարացված ծախսերի ապահովումը, ինչը հնարավոր է տարբեր եղանակների համեմատական վերլուծությամբ և ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորմամբ,<br>մասնաշենքերի «Սեյսմազինվածության բարձրացման» նպատակով նախատեսվող բոլոր հիմնանորոգման աշխատանքները պետք է կատարվեն սահմանված կարգով մշակված ու հաստատված նախագծի հիման վրա: Նախագիծը մշակելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել շենքի հիմնատակի գրունտը, համապատասխան ակտով վկայագրել այն և անհրաժեշտության դեպքում նախագծում նախատեսել համապատասխան միջոցառումներ: |
| 2 | Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը | **Նախատեսվում է**<br>ուսումնասիրել տարածքը և ձեռք բերել օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն (-ներ),անհրաժեշտության դեպքում ձեռք բերել արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակի եզրակացություն, ինչպես նաև իրականացնել գեոդեզիական աշխատանքներ, հաշվի առնելով տեղանքը՝ հողամասի մակերևույթի բացարձակ նիշերի տատանման սահմանների ընդգծմամբ,<br>ներկայացնել վերլուծական նյութեր ծախսերի խոշորացված հաշվարկների՝ այլընտրանքային լուծումների համադրման և նախատեսվող աշխատանքների հիմնավորման համար,<br>նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիություն ապահովող միջոցառումներ՝ թեքահարթակներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ<br>նախագծով նախատեսել ներքին և արտաքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության և օդորակման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման, էներգախնայողության/էներգաարդյունավետության համակարգերի կառուցում, արդիական ներքին հարդարում,<br>նախագծով նախատեսել տարածքի բարեկարգում, ցանկապատում, կանաչապատում (ծառերի և թփերի տնկարկի միջոցով), լուսավորություն, ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների **(եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն վերակառուցման կամ ապամոնտաժման)** կառուցել-վերակառուցել արտաքին հաղորդակցուղիներ և այլն **(բաշխիչ կայաններ, ենթակայաններ, օդափոխության, ջրամատակարման, կոյուղու, ջրահեռացման, ապահովման սարքեր-սարքավորումներ)**՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով.<br>տարածքի բնակլիմայական պայմանների հաշվառմամբ, ըստ անհրաժեշտության, նախատեսել այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործման համակարգեր՝ արևային ջրատաքացուցիչներ, ֆոտովոլտային սալիկներ, շենքում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար,<br>նախատեսել էներգախնայող համակարգեր,<br>նախատեսել քաղաքացիական պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:<br>Նախագծման ընթացիկ աշխատանքներն աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ:<br>**Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.**<br>Նախագծային լուծումներով անհրաժեշտ է ապահովել մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքներ՝ օրենսդրությամբ նախատեսված պահանջների և փաստացի կարիքի գնահատմամբ:<br>Վերակառուցվող/հիմնանորոգվող մասնաշենքերի հատակագծային լուծումների արդիականացում, կառուցման և/կամ վերակառուցման/հիմնանորոգման միջոցառումներ՝ նորմատիվ պահանջների համաձայն.<br>Տարածքում գոյություն ունեցող և շահագործման համար ոչ պիտանի շենք-շինությունների քանդման [illegible]), ինչպես նաև գոյություն ունեցող շենքի վերակառուցման/ հիմնանորոգման |

| | | |
|---|---|---|
| | | աշխատանքների նախագծային փաստաթղթեր՝ տեխնիկական պայմանների, ինժեներաերկրաբանական հետազննությունների, տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացությունների հիմքով,<br>**Հասարակական նշանակության օբյեկտի ընդհանուր նկարագիրը՝**<br>**Նախագծով նախատել**<br>Երկհարկանի շինության հիմնանորոգում/վերակառուցում շուրջ 4606.11քմ ընդհանուր ներքին մակերեսով՝ այդ թվում աշխատասենյակներ, սանհանգույցներ, աստիճավանդակներ,թեքահարթակներ և այլ տարածքներ:<br>Կաթսայատան և պոմպակայանի կառուցման նախագծեր՝ ըստ անհրաժեշտության<br>**Պոմպակայանի նախագիծ՝** ըստ անհրաժեշտության, առանձին նախագծային փաթեթով՝ մատակարար կազմակերպության կողմից ծառայությունների մատուցումը ապահովելու համար<br>Ներքին և արտաքին ինժեներական հաղորդակցուղիների, դիտահորերի (տարածքներում առաջացող անձրևային, հալոցքային ջրերի հեռացմամբ) կառուցման /վերակառուցման նախագիծ<br>**Տարածքը պետք է լինի հարթեցված** (տարածքների համակցման տարրեր, հենապատեր և այլն):<br>**Տարածքը բարեկարգել (**բարեկարգման համալիր տարրերի ներառմամբ՝ տարածքի ասֆալտապատում, սալապատում, լուսավորություն, գունավորած գծանշումով անցուղիներ, հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ միջոցառումներ, կանաչապատում ծառերի, թփերի տնկարկով, սիզամարգերի իրականացմամբ, ըստ անհրաժեշտության մետաղական ցանկապատ, ճարտարապետական փոքր ձևեր և այլն):<br>Այլ ենթակառուցվածքներ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների:<br>Բնակավայրի կառուցապատման նախագիծը մշակել կառուցապատման չափորոշիչներին համապատասխան՝ համայնքի զարգացման ծրագրի, գլխավոր հատակագծի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներով հաստատված պահանջների շրջանակներում: |
| 3 | Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ | **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ**<br>հողհատկացման հիմքեր<br>ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ,<br>շենքերի և շինությունների համար ձեռք բերված տեխնիկական վիճակի մասին եզրակացություններ<br>արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում) տեխնիկական վիճակի եզրակացություն<br>ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն(-ներ),<br>նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ),<br>հանույթ,<br>չափագրություններ,<br>ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, կրթություն, մշակույթ, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն և այլն):<br>Ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներում պարտադիր ներառման ենթակա են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ նախատեսված հիմնական պահանջները՝ սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) ապահովման, շենքերի նկուղային հատվածներում քաղաքացիական պաշտպանության պաշտպանական սենքերի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ միջոցառումների նախատեսման, տարածքի բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանմանն ու կլիմայի փոփոխություններին հարմարվողականությանն ուղղված (ծառերի տնկարկով ուղեկցվող) նորմատիվ պահանջները:<br>**Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝**<br><Քաղաքաշինության մասին> օրենք<br><Քաղաքացիական պաշտպանության մասին> օրենք<br><Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> օրենք<br>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի «ՀՀՇՆ 30-01-20223 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու **N 04-Ն հրաման**,<br>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀՇՆ 20-04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» **N 102-Ն հրաման,**<br>ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին» **N 253-Ն հրաման**,<br>- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի «ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական հորմերը հաստատելու, և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» **N 56-Ն հրաման,**<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի «ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին» **N 83-Ն հրաման,**<br>2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու մասին **N 80-Ն հրաման,**<br>-ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀՇՆ 40-01.02- «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» Հայաստանի<br>ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» **N 1504-Ն որոշում**,<br>ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ<br>ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <Հայաստանի Հանրապետությունում |

| | | |
|---|---|---|
| | | կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> **N596-Ն որոշում**<br>ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի <Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1998 թվականի նոյեմբերի 25-ի N168 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին> **N282-Ն հրաման** |
| 4 | Նախագծման փուլերը | **Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N 128-Ն հրամանի համաձայն<br>Նախագծային աշխատանքների իրականացում<br>**«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր»** փուլերով (այդ թվում **Էսքիզային նախագիծ՝** ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով) |
| 5 | Նախագծի կազմը | **«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր»** <u>***փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր***</u><br>**Ընդհանուր բացատրագիր**<br>**Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ)<br>**Ճարտարապետաշինարարական մաս**<br>Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ /այդ թվում շենքերի կահավորման հատակագիծ/<br>Եռաչափ մոդելավորում (3D)<br>**Կոնստրուկտիվ մաս**<br>Կոնստրուկտիվ լուծումներ,<br>կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն<br>**Ինժեներական** (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր)<br>Էլեկտրամատակարարման, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության և օդորակման, ջեռուցման, գազամատակարարման, էներգախնայողության համակարգեր,կապի ցանցեր, տեսահսկում, հակահրդեհային ազդանշանում, հրդեհաշիջում և այլն,<br>Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն<br>Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ<br>Շինարարության կազմակերպման նախագիծ<br>Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ<br>Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ<br>Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ:<br>Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ<br><u>*Նախագծի համաձայնեցում*</u><br>**Համայնքի ղեկավարի,**<br>**ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,**<br>**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,**<br>Ըստ անհրաժեշտության՝ (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ **ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ:** |
